# ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԾԵՐԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*DOI: 10.52174/2579-2989_2025.3-15*

**Հիմնաբառեր.** *սոցիալական ձեռնարկատիրություն, բնակչության ծերացում, աշխատաշուկայի միտումներ, «երկրորդ կարիերա», ակտիվ ծերություն, միջսերնդային համագործակցություն*

Թերեզա ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն

*2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ:*

*2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:*

*Հեղինակ է շուրջ 30 հոդվածի, որից 4-ը գիտական հրապարակումներ են, մեկը՝ կոլեկտիվ մենագրություն:*

*https://orcid.org/0000-0001-8888-045X*

*Աշխատուժի ծերացումը մարտահրավեր է տնտեսության համար, և սոցիալական ձեռներեցությունը կարող է լուծել այդ խնդիրը՝ նոր հնարավորություններ բացելով տարեցների առաջ, ապահովելով նրանց ակտիվ մասնակցությունը հասարակական կյանքին և ուժեղացնելով համայնքային կապերը:*

*Աշխարհի բազմաթիվ երկրներում թոշակի անցած աշխատուժը կրկին դառնում է տնտեսական և սոցիալական քաղաքականության կարևոր ուղղություն՝ պայմանավորված ժողովրդագրական փոփոխություններով: Ձևավորվում է միտում, ըստ որի՝ թոշակի անցած աշխատուժը սոցիալական ձեռնարկատիրության միջոցով վերստին ներգրավվում է աշխատաշուկայում: Այս մոտեցումը լուծում է երկու խնդիր միաժամանակ. ապահովվում է տարեցների սոցիալական ներառումը, և մեղմվում են աշխատուժի պակասի հետևանքները:*

*Սոցիալական ձեռնարկատիրությունն արդյունավետ գործիք է, քանի որ դրանում միավորվում են սոցիալական առաքելությունն ու տնտեսական կայունությունը: Դա ստեղծում է հնարավորություններ, որոնց շնորհիվ՝ կուտակված փորձն ու գիտելիքը վերածվում են նոր արժեքի՝ աշխատաշուկայի, հասարակության և երիտասարդ սերունդների համար: Այս նոր համընդհանուր միտումը նպաստում է նրան, որ աշխատաշուկայից դուրս մնացած անձինք դառնում են փոփոխությունների շարժիչ ուժ, և մեղմվում է աշխատաշուկայում առաջացող մասնագիտական պակասուրդը: Դա արտահայտվում է տարբեր նախաձեռնությունների միջոցով՝ սկսած Encore.org-ի կողմից ԱՄՆ-ում խրախուսվող «երկրորդ կարիերայի» ծրագրից մինչև Mirthy-ի թվային հարթակը՝ Մեծ Բրիտանիայում և Seniorpreneurs ծրագրերը՝ Կանադայում ու Ավստրալիայում:*

Ժողովրդագրական համընդհանուր միտումները վկայում են, որ աշխատունակ բնակչության միջին տարիքն ավելանում է, ինչի հետևանքով տնտեսական համակարգերը կանգնում են լուրջ մարտահրավերի առջև: Այսպես՝ Եվրամիության երկրներում 55-64 տարեկանների զբաղվածության մակարդակը 2023 թ. կազմել է 63.9%, ինչն ընդամենը 3%–ով է զիջում 2009–ին արձանագրված նույն ցուցանիշին: ՏՀԶԿ տվյալներով՝ տարեց աշխատողների զբաղվածության մակարդակը 2022 թվականին կազմել է 62%, որը բավական ցածր է՝ 25-54 տարեկանների համեմատ: Աշխարհի բնակչությունն արագ կերպով ծերանում է, սակայն թոշակի անցած բնակչությունն արդեն կարող է չընկալվել աշխատաշուկայից դուրս մնացածների կարգավիճակում[1]: Նշվածի հիմքում, որպես գործիք, կիրառվում է սոցիալական ձեռնարկատիրությունը: Սոցիալական ձեռնարկատիրությունը գործունեության ձև է, որը միավորում է շահույթի և հասարակական խնդիրների լուծման նպատակները: Ի տարբերություն ավանդական ձեռներեցի, սոցիալական ձեռնարկատերը ոչ թե մտածում է շահույթի առավելագունացման մասին, այլ ամբողջական շահույթը կրկին ներդնում է հասարակական առաքելության իրականացման մեջ: Սոցիալական ձեռնարկատիրությունը համեմատաբար նոր, բայց արագ զարգացող երևույթ է ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Վերջին տասնամյակներում բազմաթիվ երկրներ սկսել են սոցիալական ձեռնարկատիրությունը դիտարկել որպես արդյունավետ միջոց հասարակական խնդիրների լուծման համար: Այս մոդելը հայտնի դարձավ Նոբելյան մրցանակակիր Մուհամմադ Յունուսի միջոցով, որը հաջողությամբ կիրառեց դա՝ 1976 թվականին, Բանգլադեշում՝ հիմնադրելով թյունը և ապահովելով զբաղվածություն: Այս բանկը միկրոներդրումների համակարգի միջոցով ֆինանսավորում է ցածր եկամուտ ունեցող մարդկանց՝ առանց ավանդական բանկային պայմանների կիրառման: Grameen Bank-ի մոդելը գործարկվել է տարբեր երկրներում՝ հասնելով փայլուն հաջողությունների: Սոցիալական ձեռնարկատիրության զարգացմանը նպաստում են մի քանի հիմնական գործոններ՝ կրթական մակարդակի բարձրացումը, տեխնոլոգիական նորարարությունները և միջազգային համագործակցության ընդլայնումը: Այս գործընթացում կարևոր տեղ ունեն ինչպես պետությունները, այնպես էլ միջազգային կազմակերպությունները, որոնք աջակցում են սոցիալական ձեռներեցներին և նրանց ծրագրերի իրականացմանը: Մոդելը նպատակ ունի միավորելու ձեռնարկատիրական մտածելակերպը, հիմնությունները և սոցիալական պատասխանատվությունը՝ առաջարկելով կայուն և երկարաժամկետ լուծումներ սոցիալական, տնտեսական և բնապահպանական մարտահրավերների համար[2]:

Հայաստանում թեև այս մոդելը դեռ նոր է, բայց արդեն ունի զգալի հեռանկարներ և կարող է դառնալ կարևոր գործիք աղքատության նվազեցման և սոցիալական զարգացման համար: Հայաստանը փորձում է այս առումով համագործակցել միջազգային զարգացման կազմակերպությունների հետ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու համար և նպաստել հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացմանը: Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը մեծացնում է սոցիալական ձեռնարկատիրության ազդեցությունը և թույլ տալիս նոր ներդրումներ ապահովել: Հայաստանում նույնպես սոցիալական ձեռներեցության դերը նկատելիորեն աճում է՝ հատկապես երիտասարդների և նորարար ձեռնարկատերերի շրջանում: Շատ երիտասարդներ և ձեռնարկատերեր հետաքրքրված են այս ոլորտով, սակայն հաճախ կանգնում են հիմնադրման, ֆինանսավորման և կառավարման հետ կապված բարդությունների առաջ: Սոցիալական ձեռնարկատիրության հեռանկարները բացահայտում են այն կարևորությունը, թե ինչպես կա-

[1] OECD Employment Outlook 2025, https://www.oecd.org/en/publications/oecd-employment-outlook-2025_194a947b-en/full-report/component-8.html?utm

[2] Yunus, M. (2007). Creating a world without poverty: Social business and the future of capitalism. PublicAffairs, https://archive.org/details/creatingworldwit0000yunu_l2a3?utm

րող են բիզնես մոդելները և հասարակական բարեկեցությունը գործել միասին՝ ավելի մեծ ազդեցություն թողնելով ոչ միայն տնտեսության, այլև համայնքների զարգացման վրա՝ ապահովելով երկարաժամկետ դրական փոփոխություններ:

Այս համատեքստում սոցիալական ձեռնարկատիրության զարգացումը ստանում է առանձնահատուկ կարևորություն. դա կարող է ապահովել տարեց աշխատողների սոցիալական և տնտեսական ներառումը, նպաստել նրանց փորձի արդյունավետ օգտագործմանը և մեղմել աշխատաշուկայում առաջացող մասնագիտական բացը: Բացի այդ, սոցիալական ձեռնարկատիրությունը դուռ է բացում սերունդների միջև՝ գիտելիքի փոխանցման և միջսերնդային համագործակցության համար, ինչը երկարաժամկետ կտրվածքով ուժեղացնում է մարդկային կապիտալի կայուն զարգացումը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա բնակչության ծերացման գործակիցը, որը ներկայացնում է 60 և բարձր տարիքի բնակչության թվաքանակը՝ 15 տարեկանից ցածր 100 բնակչի հաշվարկով, 2010 թվականի սկզբին կազմել է 72%, իսկ 2022 թվականին՝ աճել մինչև 94.8%[3]: Հայաստանում, ինչպես և այլ երկրներում, ծերերը հաճախ բախվում են մի քանի հիմնական խնդիրների՝ ֆինանսական անկայունություն, առողջության պահպանման դժվարություններ, սոցիալական մեկուսացում և աղքատություն: Սոցիալական ձեռնարկատիրությունը հաճախ նպատակ ունի լուծելու այս խնդիրները՝ առաջարկելով կենսապայմանների բարելավում, սոցիալական կապերի ուժեղացում և առողջապահական ծառայություններ:

Միջազգային հետազոտությունները ցույց են տալիս, որ թոշակի տարիքի հասած աշխատողները չեն ցանկանում ամբողջովին դադարեցնել աշխատանքը: Օրինակ՝ Mercer-ի տվյալներով՝ 2025 թվականին աշխատողների միայն 16%-ը մտադիր է ամբողջովին դադարեցնել աշխատանքը թոշակի անցնելուց հետո, մինչդեռ 84%-ը նախատեսում է շարունակել աշխատել՝ նվազեցնելով ժամերը կամ թոշակի անցնելով փուլային տարբերակով[4]: ՏՀԶԿ-ն (OECD) շեշտում է, որ տարեցները՝ գոնե մասնակի կամ ազատ ռեժիմով աշխատելու դեպքում, կարող են պահպանել մասնագիտական ակտիվությունը[5]: ՏՀԶԿ–ն նշում է նաև, որ 55-64 տարեկանների աշխատունակության մակարդակը 2023 թ. հասել է 64%-ի, ինչը մոտ 8%-ով ավելի է, քան վերջին տասնամյակի ցուցանիշները: Միաժամանակ, կան դեպքեր, երբ բարձրանում է թոշակի տարիքը (օր.՝ Ֆրանսիայում՝ 62-ից մինչև 64)՝ նպատակադրվելով երկարացնելու աշխատունակությունը և կայուն դարձնելու թոշակային համակարգերը:

Մասնավորապես՝ World Economic Forum–ի տվյալներով՝ միայն ՏՀԶԿ տարածքում 55+ աշխատողների մասնակցությունը կարող է նպաստել մինչև 3.5 տրիլիոն դոլարի տնտեսական գործունեության աճին[6]: Հետևաբար՝ այս ամենից կարելի է հանգել նրան, որ թոշակառու աշխատուժի ներգրավումը ոչ միայն սոցիալապես, այլև տնտեսապես է կարևոր: Միջազգային աշխատանքային կազմակերպությունը (ILO) նախաձեռնել է «Inter Gen» ծրագրեր՝ նպատակ ունենալով աջակցելու տարեցների աշխատանքի շուկա վերադարձին, հատկապես բարձր եկամուտ ունեցող և զարգացող երկրներում[7] (աղյուսակ 1):

ԱՄՆ-ում գործող Encore.org և Papa ծրագրերը, օրինակ, խրախուսում են տարեցներին մասնակցել «երկրորդ կարիերային» կամ աջակցում են ընկերակցությամբ և խնամքով: Մեծ Բրիտանիայում Mirthy-ն հնարավորություն է տալիս 60+ տարիքի մարդկանց վարելու առցանց դասընթացներ և միջոցառումներ՝ խթանելով

[3] «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների ռազմավարության գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/8167

[4] Yv. Sonsino, An.Narkiewicz, Employers are challenged to seek new ways to realign working practices with today's workforce reality., https://www.mercer.com/insights/people-strategy/future-of-work/reimaging-work-and-retirement/?utm_source

[5] OECD, https://www.oecd.org/en/publications/oecd-employment-outlook-2025_194a947b-en/full-report/component-8.html?utm

[6] World Economic Forum, https://www.weforum.org/agenda/2018/08/older-workers-employment-oecd-economies/?utm

[7] International Labour Organization (ILO). (2023). Intergenerational programs and the future of work. Geneva: ILO. Retrieved from https://www.ilo.org/global/publications

ԱՂՅՈՒՍԱԿ 1

**Տարեց աշխատուժի ակտիվությունը՝ սոցիալական ձեռնարկատիրության միջոցով (միջազգային համեմատություններ)**

| Երկիր (տարածաշրջան) | Ծրագրեր / սոցիալական նախաձեռնություններ | Թոշակի դուրսբերման աշխատուժի մասնակցություն | Նպատակ / առաջնահերթություն | Հղում |
|---|---|---|---|---|
| ԱՄՆ | Encore.org, Papa | 55–64 տարեկանների գրեթե 64%-ի համար՝ մասնակի աշխատանք կամ «երկրորդ կարիերա» | Թոշակառուներին ներգրավել ակտիվ կյանքում, ապահովել միջսերնդային մենթորություն | Encore Network, Mercer, 2025 |
| ԱՄՆ/Եվրոպա | The Eden Alternative | Բազմատարիքային կենտրոններ | Միջսերնդային կապերի ամրապնդում | The Eden Alternative, n.d. |
| Հնդկաստան/ Աֆրիկա | HelpAge International | 55+ աշխատուժն ակտիվորեն մասնակցում է համայնքային ծրագրերին | Տարեցների սոցիալական և տնտեսական ներառում | HelpAge International, n.d. |
| Մեծ Բրիտանիա | Mirthy | 60+ տարեկանների առցանց ակտիվություն | Կրթություն, սոցիալական ներգրավվածություն | Mirthy, n.d.; Cambridge Judge Business School, n.d. |
| Կանադա | Seniorpreneurs ծրագրեր | Տարեց ձեռներեցների մասնաբաժինը՝ 20–30% | Տարեցների ձեռնարկատիրություն, ակտիվ աշխատանք | Canada West Foundation, 2017 |
| Ավստրալիա | Seniorpreneurs ծրագրեր | 55+ տարեկանների ակտիվ մասնակցություն ձեռնարկատիրությանը | Տարեցների ինտեգրում աշխատաշուկային | Senior entrepreneurship in Australia, n.d. |
| ԵՄ (ընդհանուր) | Ոչ հատուկ բիզնես, բայց պետական և ԵՄ համատեղ ծրագրեր | 55–64 տարեկանների զբաղվածություն՝ 64% | Աշխատունակության երկարաձգում, միջսերնդային փոխգործակցություն | Eurostat, 2023 |
| ՏՀԶԿ երկրներ | Տարբեր քաղաքական և սոցիալական ձեռնարկներ | 55–64 տարեկանների զբաղվածություն՝ 62% | Աշխատաշուկայի ճնշումների մեղմում, կուտակված փորձի օգտագործում | OECD, 2023 |
| Աշխարհ | ILO InterGen ծրագրեր | Տարեցների մասնաբաժին՝ 50–65%-ի միջակայքում | Միջսերնդային աշխատանքային ծրագիր, զբաղվածության խթանում | ILO, 2023 |

նրանց սոցիալական ակտիվությունը: Կանադայում և Ավստրալիայում իրականացվում են Seniorpreneurs ծրագրեր, որոնք նպաստում են տարեցների ձեռնարկատիրական գործունեությանը: Հնդկաստանում և Աֆրիկայում HelpAge International-ը սոցիալական ձեռնարկներ է իրականացնում, որտեղ թոշակառուները ներգրավվում են համայնքային ծրագրերում՝ ստեղծելով եկամուտ և պահպանելով սոցիալական ներգրավվածությունը: Միջազգային կազմակերպությունները, օրինակ, ILO, InterGen ծրագրերի միջոցով խթանում են միջսերնդային աշխատաշուկային ինտեգրումը, որը թույլ է տալիս բարձրացնել տարեցների մասնակցության մակարդակը և մեղմել աշխատուժի պակասը[8]: Այս տվյալները ցույց են տալիս, որ թոշակի անցած աշխատուժն այլևս չի դիտվում որպես պասիվ խումբ: Սոցիալական ձեռնարկությունները և համապատասխան քաղաքականությունը հնարավորություն են տալիս նրանց վերածվելու ակտիվ, արժեքավոր ռեսուրսի, որը կարող է նպաստել ինչպես համայնքների, այնպես էլ ամբողջ տնտեսության զարգացմանը: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ սոցիալական ձեռնարկություններն ակտիվորեն մասնակցում են տարբեր համայնքային նախաձեռնությունների, մասնավորապես՝ զբաղվածության ավելացման և աղքատության նվազեցման ուղղությամբ[9]: Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրությունը զարգանում է տարբեր ոլորտներում՝ սկսած գյուղատնտեսությունից մինչև էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ ու կրթական ծրագրեր: Այս մոդելը ցույց է տալիս, թե ինչպես պետք է կապել բարեկեցությունը և ձեռնարկատիրությունը՝ միաժամանակ լուծելով սոցիալական խնդիրներ: Ընդ որում, սոցիալական ձեռներեցության զարգացման հե-

[8] International Labour Organization (ILO). (2023). Intergenerational programs and the future of work. Geneva: ILO. Retrieved from https://www.ilo.org/global/publications

[9] B Corporation certification. https://bcorporation.net/

ԱՂՅՈՒՍԱԿ 2

**Ավանդական և սոցիալական ձեռնարկատիրության համեմատական աղյուսակ[6]**

| Ավանդական ձեռնարկատիրություն | Սոցիալական ձեռնարկատիրություն |
|---|---|
| **Շահույթ** | |
| Ավանդական բիզնեսները կենտրոնանում են մաքուր շահույթի ստացման վրա: | Սոցիալական բիզնեսները շահույթը կրկին ներդնում են հասարակական բարեկեցության ու զարգացման մեջ: |
| **Հասարակական ազդեցություն** | |
| Ավանդական բիզնեսները հաճախ չեն ունենում ուղղակի սոցիալական ազդեցություն: | Սոցիալական բիզնեսներն առաջնահերթությունը տալիս են հասարակական խնդիրների լուծմանը: |
| **Կառավարման մոդել** | |
| Ավանդական բիզնեսները հիմնականում հիմնված են ինստիտուցիոնալ և ֆինանսական նպատակների վրա: | Սոցիալական բիզնեսներն ընդգրկում են մարդկանց՝ սոցիալական խնդիրների լուծման նպատակով: |
| **Ֆինանսական կայունություն** | |
| Սոցիալական բիզնեսները ավելի մեծ ուշադրություն են դարձնում իրենց սոցիալական ազդեցությանը, մինչդեռ կարող են պահպանել տնտեսական կայունություն՝ ըստ ճիշտ մոդելների ու ֆինանսական մոտեցումների: | |

ռանկարը մեծ է: Մյուսների նման, երկրի սոցիալական ձեռնարկությունները կարող են լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝ սկսած կրթությունից մինչև առողջապահություն, զբաղվածություն և բնապահպանական մարտահրավերներ: Այս առումով, Հայաստանում առկա է ներուժ, և պետք է շարունակել խթանել սոցիալական ձեռնարկատիրությունը՝ ապահովելով ավելի լավ պայմաններ և աջակցության ծրագրեր[10]:

Սոցիալական ձեռնարկատիրության ճանապարհը լի է մարտահրավերներով, որոնք ինչպես ֆինանսական, այնպես էլ կառավարման և իրավական բնույթի են: Ամբողջ աշխարհում սոցիալական ձեռնարկատիրությունն ունի սահմանափակ հասանելիություն ավանդական ֆինանսական ռեսուրսներին, քանի որ ներդրողները հաճախ նախապատվությունը տալիս են շահույթ ապահովող գործունեությանը: Այդուհանդերձ, գոյություն ունեն որոշ հիմնադրամներ և դրամաշնորհային ծրագրեր, որոնք աջակցում են սոցիալական ձեռնարկատիրությանը: Էական տարբերություններ կան սոցիալական և ավանդական ձեռնարկատիրության մոդելների միջև, որոնց ընդգծումը կարևոր է յուրաքանչյուրի ճիշտ կիրառման համար: Սոցիալական ձեռնարկատերերը չեն փնտրում միայն ֆինանսական շահույթ, այլ փորձում են հասնել հասարակության համար կարևոր նպատակների իրականացմանը: Սակայն, դա չի նշանակում, որ սոցիալական ձեռնարկատիրությունը չի կարող լինել տնտեսապես արդյունավետ: Այդուհանդերձ, ավանդական ձեռնարկատիրությունն ավելի շատ կենտրոնանում է եկամուտների ավելացման վրա՝ հաճախ անտեսելով սոցիալական ազդեցությունը (աղյուսակ 2):

Սոցիալական ձեռնարկատիրությունը համարվում է ամենաարագ զարգացող բիզնես մոդելներից մեկը՝ ամեն տարի ապահովելով 20% աճ[11]: Դա ունի գլոբալ ազդեցություն, ինչի մասին վկայում են վերջին տարիների տվյալները. 2020 թ. ամբողջ աշխարհում գոյություն ուներ սոցիալական ձեռնարկատիրության ավելի քան 10 միլիոն սուբյեկտ, որից ավելի քան 1 միլիոնը գործում էր զարգացող շուկաներում[12]: Աշխարհում սոցիալական ներդրումների շուկան մոտավորապես հասել է $500 միլիարդի՝ 2020 թ. դրությամբ: 2019 թ. տվյալներով՝ սոցիալական ձեռնարկատիրության ծրագրերի միջոցով գրանցվել են մոտ 3 միլիոն նոր աշխատատեղեր, որոնցից շատերը վերաբերում են գյուղական և զարգացող տարածքներին[13]: 2020 թ. վերջին գրանցված էին ավելի քան

[10] B Corporation certification. https://bcorporation.net/
[11] Skoll Foundation, https://skoll.org/
[12] Social Enterprise UK, https://www.socialenterprise.org.uk/
[13] B Corporation certification. https://bcorporation.net/

**Սոցիալական ձեռնարկությունների աճ**

- Ըստ B Lab-ի՝ 2020 թ. դրությամբ աշխարհում կան ավելի քան 2,500 B Corp սертիֆիկացված ընկերություններ, որոնք պատասխանատու են իրենց սոցիալական և էկոլոգիական ազդեցությունների համար:
- Սոցիալական ձեռնարկությունների համաշխարհային շուկան շարունակում է աճել տարեկան շուրջ 15%-ով՝ ցուցադրելով, որ սոցիալական ձեռնարկատիրությունը դարձել է տնտեսության նոր և կարևոր հատված:

**Սոցիալական ներդրումների աճ**

- Ըստ GIIN-ի (Global Impact Investing Network) տվյալների՝ 2020 թ. սոցիալական ներդրումների շուկան կազմել է $715 միլիարդ, ինչը ցույց է տալիս ներդրողների հետաքրքրությունը սոցիալական և էկոլոգիական խնդիրների լուծման նկատմամբ:
- Սոցիալական ներդրումների ընդհանուր շուկան աճում է տարեկան 5-7% պարբերականությամբ, և այդ աճի մի մասը ուղղված է զարգացող շուկաներին:

**Միջազգային դրամաշնորհներ**

- 2020 թ. ընթացքում միջազգային հիմնադրամները մոտ $10 մլրդ են տրամադրել սոցիալական ձեռնարկությունների զարգացմանը (դրամաշնորհներ, վարկեր և ֆինանսական այլ աջակցություն):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

## Սոցիալական ներդրումներ

**Սոցիալական ձեռնարկությունների թիվը**

- 2020 թ. տվյալներով՝ Հայաստանում գոյություն ունի մոտ 200 սոցիալական ձեռնարկություն, որի ավելի քան 40%-ը գյուղական տարածքներում (source: UNDP Armenia):

2018-2020 թթ. ընթացքում սոցիալական ձեռնարկությունների թիվը Հայաստանում աճել է 15%-ով (source: World Bank):

**Սոցիալական ձեռնարկությունների որքանում ստեղծված աշխատատեղեր**

- 2020 թ. սոցիալական ձեռնարկությունները Հայաստանում ստեղծել են շուրջ 3,500 աշխատատեղ՝ նպաստելով տեղական տնտեսության կայունացմանը (source: Asian Development Bank (ADB)).
- 2023 թ. կանխատեսումներով՝ սոցիալական ձեռնարկությունները կարող են ավելացնել աշխատատեղերի թիվը մինչև 5,000՝ ապահովելով կայուն տնտեսական աճ:

**Դրամաշնորհներ և ֆինանսավորում**

- 2020 թ. ՀՀ սոցիալական ձեռնարկությունները ստացել են մոտ $5 միլիոն դրամաշնորհ և ֆինանսական աջակցություն՝ հիմնականում միջազգային կազմակերպություններից, ինչպիսիք են UNDP-ն և ADB-ն (source: UNDP Armenia).

**Սոցիալական բիզնեսների հետ կապված ծրագրեր**

○2020 թ. ՀՀ կառավարությունը սոցիալական ձեռնարկությունների աջակցման համար ֆինանսավորել է մոտ 50 ծրագրեր, որոնք ուղղված էին գյուղատնտեսությանը, էներգետիկային և կրթությանը (source: Government of Armenia):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

## Սոցիալական ձեռնարկատիրությունը Հայաստանում[14]

20,000 սոցիալական հիմնադրամներ, որոնք տրամադրում էին դրամաշնորհներ սոցիալական ձեռնարկությունների համար: Այդ հիմնադրամների 55%-ը գործում էր զարգացող երկրներում, որտեղ սոցիալական խնդիրների լուծումը պահանջում էր ձեռնարկատիրական մոտեցումներ[15]: Ելնելով վերոնշյալից՝ կարող ենք հանգել նրան, որ հասարակական խնդիրների լուծման ուղղությամբ գնալով աճում է ներդրողների հետաքրքրությունը (գծապատկեր 1):

Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության զարգացմանը կարևոր աջակցություն են ցուցաբերում պետական ծրագրերը: 2020 թ. սոցիալական ձեռնարկություններին տրամադրված դրամաշնորհների և ֆինանսական աջակցության ընդհանուր գումարը կազմել է մոտ $5 միլիոն, որը փոխանցվել է 50 սոցիալական բիզնեսների[16]: Բայց և այնպես, սոցիալական ձեռնարկությունները Հայաստանում ավելի մեծ ուշադրություն են դարձնում քրաուդֆանդինգին՝ հանրային և մասնավոր ներդրումներ հավաքելու համար: Օրինակ՝ հայկական սոցիալական ձեռնարկատիրության սուբյեկտներն օգտագործում են աշխարհի տարբեր հարթակներ՝ բարեգործական միջոցներ հավաքելու նպատակով՝ դրանք ներդնելով սոցիալական խնդիրների լուծման մեջ: Սոցիալական ձեռնարկատիրության ոլորտի աճը հետագայում Հայաստանում կարող է բարձրացնել զբաղվածության մակարդակը, բարելավել էկոլոգիական իրավիճակը և կրթության որակը: Այժմ գրանցված են մոտ 200 սոցիալական ձեռնարկություններ, որոնց մեծ մասը կենտրոնացած է գյուղատնտեսության, վերականգնվող էներգիայի և կրթության ոլորտներում: Սոցիալա-

[14] Հայաստանում սոցիալական բիզնեսների զարգացմանը նպաստող վիճակագրություն՝ հիմնված տեղական ուսումնասիրությունների և պետական ինստիտուտների տվյալների վրա:
[15] The Foundation Center, https://www.fdncenter.org/
[16] UNDP Armenia, https://www.undp.org/armenia

կան ձեռնարկությունների թիվը Հայաստանում աճել է 15%-ով՝ վերջին հինգ տարվա ընթացքում[17]: Այս վիճակագրությունը վկայում է, թե որքան մեծ է սոցիալական ձեռնարկատիրության ազդեցությունը թե՛ Հայաստանում, թե՛ ամբողջ աշխարհում: Սա նաև հուշում է այս մոդելի կարևորության ու հեռանկարների մասին: Կառավարությունը հաճախ ֆինանսավորում է ծրագրեր, որոնք աջակցում են սոցիալական ձեռնարկություններին՝ աշխատատեղեր ստեղծելու համար, հատկապես գյուղական տարածքներում՝ նպատակ ունենալով կրճատելու գործազրկության մակարդակը:

Միջազգային կազմակերպությունները նույնպես մեծ դեր ունեն Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության զարգացման գործում: Օրինակ՝ Ասիական զարգացման բանկը (ADB) և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերը (UNDP) աջակցում են սոցիալական ձեռնարկությունների զարգացմանը՝ տրամադրելով դրամաշնորհներ, տեխնիկական աջակցություն և ֆինանսավորում: Աշխարհում գործող սոցիալական ձեռնարկությունների աջակցության հիմնադրամները միջազգային դրամաշնորհների միջոցով ֆինանսավորում են Հայաստանի սոցիալական ձեռնարկությունները, հատկապես այն բիզնեսները, որոնք աշխատում են շրջակա միջավայրի պահպանության, վերականգնվող էներգիայի և տեղական արտադրության ոլորտներում: Ինչպես նաև դրամաշնորհներ և կրթական ծրագրեր են տրամադրվում սոցիալական ձեռնարկատիրության մեջ ներգրավված գործարարներին և փորձագետներին: Հայաստանի տնտեսության մեջ արդեն իսկ նշմարելի է սոցիալական ձեռնարկությունների արդյունավետությունը. մի շարք սոցիալական ձեռնարկություններ գործում են և հաջողությամբ լուծում սոցիալական խնդիրներ: Դրանք տրամադրում են աշխատանք, կրթություն, առողջապահական ծառայություններ և էլեկտրաէներգիա: Այս պահին հիմնականում իրականացվել են գյուղատնտեսական ծրագրեր: Գյուղատնտեսությունը Հայաստանում դեռևս կարևոր տնտեսական ոլորտ է, ուստի սոցիալական ձեռնարկություններն աշխատում են այն տարածքներում, որտեղ գյուղացիները հնարավորություն ունեն ստեղծելու կայուն բիզնեսներ (օրինակ՝ տեղական մթերքի վաճառք, գյուղատնտեսական վերամշակման ծառայություններ): Գրանցվում են հաջողություններ վերականգնվող էներգիայի ոլորտում: Այս ոլորտը վերջերս է սկսել ակտիվորեն զարգանալ Հայաստանի որոշ բնակավայրերում՝ աջակցելով շրջակա միջավայրին և թեթևացնելով էներգիայի արտադրության ճնշումը: Սոցիալական ձեռնարկատիրության հաջողված օրինակ է «Հայկական կաթ» ընկերությունը, որը սոցիալական ձեռնարկություն է և աջակցում է տեղական գյուղացիներին՝ առաջարկելով թարմ և բարձր որակով կաթնամթերք, միաժամանակ ստեղծելով աշխատատեղեր գյուղերում: Մեկ այլ օրինակ է «Energize Armenia»-ն, որն առաջարկում է նորարարական լուծումներ՝ կիրառելով արևային պանելներ և էներգիայի վերամշակման այլ տեխնոլոգիաներ՝ գյուղական համայնքների համար մատչելի դարձնելով ածխածնի արտանետումները նվազեցնող էներգիան:

Հայաստանի պարագայում սոցիալական ձեռնարկատիրությունը մեծ դեր կարող է ունենալ նաև ծերերի և հաշմանդամների աջակցման հարցում: Այս խմբերը հաճախ բախվում են սոցիալական և տընտեսական բազմաթիվ մարտահրավերների, ինչպիսիք են աշխատանքի պակասը, առողջապահության և սոցիալական ծառայությունների սահմանափակ մատչելիությունը և հասարակության մեջ նրանց մասին առկա կարծրատիպերը: Սոցիալական բիզնեսները, որոնք գործում են այս ոլորտում, նպատակ ունեն բարելավելու նրանց կյանքի որակը և ապահովելու ավելի ինտեգրված հասարակություն (տե՛ս գծապատկեր 3, 4, 5):

Սոցիալական ձեռնարկատիրության հիմնադրման առաջին և ամենակարևոր քայլը հասարակական կարիքների գնահատումն է: Անհրաժեշտ է ընտրել որոշակի խնդիր, որը զգալի ազդեցություն ունի համայնքի կամ երկրի վրա: Հայաստանի

[17] ADB Armenia, https://www.adb.org/where-we-work/armenia

| Grameen Danone (Բանգլադեշ) | The GoodCare Group (Մեծ Բրիտանիա) | The Arc (ԱՄՆ) |
|---|---|---|
| • Սա մի բիզնես է, որը միավորում է սոցիալական առաքելությունը և մասնավոր ընկերությունների գործառույթները՝ մատակարարելով սնունդ հաշմանդամություն ունեցող անձանց և ծերերին՝ Բանգլադեշի աղքատ շրջաններում: | • Սոցիալական բիզնես է, որն առաջարկում է խնամքի ծառայություններ ծերերին և հաշմանդամներին՝ օգտագործելով տեխնոլոգիաներ՝ բարելավելու նրանց հոգեբանական և ֆիզիկական բարեկեցությունը: Այս նախագիծն ապահովում է տնային խնամք, սակայն նաև սոցիալական աջակցություն և ընկերություն նրանց համար, ովքեր կարող են տառապել մեկուսացումից: | • Սա հասարակական կազմակերպություն է, որն աջակցում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ զբաղվածության, կրթության, բնակության և այլ ծառայություններով: Այս մոտեցումը միտված է նրանց ընդգրկմանը հասարակական կյանքում: |

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

## Աշխարհում ծերերի և հաշմանդամների համար իրականացվող սոցիալական ձեռներեցության օրինակներ[18]

| | |
|---|---|
| Սոցիալական բիզնեսներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու համար | • «Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման կենտրոններ»՝ կազմակերպություններ, որոնք ստեղծում են աշխատատեղեր հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այս ծրագրերը հնարավորություն են տալիս նրանց զարգացնելու իրենց մասնագիտա-կան հմտությունները և ինտեգրվելու հասարակությանը: |
| Խնամքի ծառայություններ | • Սոցիալական ձեռնարկություններ, որոնք, որպես խնամքի ծառայություններ, անհրաժեշտ աջակցություն են մատուցում ծերերին և հաշմանդամություն ունեցող անձանց: Որոշ կազմակերպություններ նույնիսկ առաջարկում են տնային խնամք կամ ուղեկցող ծառայություններ՝ նվազեցնելու նրանց մեկուսացումը: |
| Էլեկտրոնային խանութներ և արհեստագործական արտադրանք | • Հայաստանում գործող շատ սոցիալական ձեռնարկություններ ստեղծում են էլեկտրոնային խանութներ նրանց համար, ովքեր չունեն մուտք դեպի ավանդական աշխատաշուկա: Նպատակն է աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց՝ գտնելու իրենց տեղը հասարակա-կան կյանքում: |

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

## Ծերերի և հաշմանդամների համար սոցիալական ձեռներեցության դրսևորման ձևերը

| Կենսապայմանների բարելավում | Սոցիալական ինտեգրացում | Սոցիալական կապեր և աջակցություն |
|---|---|---|
| • Սոցիալական ձեռնարկությունները կարող են բարելավել ծերերի և հաշմանդամների առողջությունը՝ տրամադրելով հարմարեցված խնամքի ծառայություններ և աջակցություն: | • Սոցիալական ձեռնարկությունները կարող են մեծապես նպաստել հաշմանդամություն ունեցող անձանց և ծերերի ինտեգրմանը հասարակության մեջ՝ ստեղծելով աշխատանքի հնարավորություններ և խթանելով նրանց սոցիալական ակտիվությունը: | • Այս ձեռնարկությունները կարող են օգնել նվազեցնել ծերերի և հաշմանդամություն ունեցող անձանց միայնության և մեկուսացման զգացումը: |

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

## Սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հիմնական ազդեցությունը և արդյունքները

պարագայում, կարծում ենք, սոցիալական ձեռնարկատիրության զարգացմամբ հնարավոր կլինի մեղմել ծերերի և հաշմանդամների առաջ ծառացած խնդիրները՝ գործազրկություն, կրթական հնարավորությունների պակաս, կյանքի որակի ցածր մակարդակ, սոցիալական ինտեգրման դժվարություններ և այլն: Ուստի նպատակահարմար է տվյալ ներուժի վեկտորն ուղղել այս նպատակների իրագործմանը՝ հիմքում ունենալով արդյունավետ գործնական մոդել, որը պետք է լինի և՛ շահութաբեր, և՛ ազդեցիկ (գծապատկեր 6):

Սոցիալական ձեռնարկատիրության հիմնադրման տեսանկյունից, հաջորդ կարևոր քայլը ֆինանսական միջոցների ներգրավումն է՝ հետևյալ հիմնական տարբերակներով.

- հիմնադրամներ և դրամաշնորհներ՝ և՛ տեղական, և՛ միջազգային,

[18] Grameen Danone (Բանգլադեշ), https://www.grameendanon.com/
The GoodCare Group (Մեծ Բրիտանիա), https://www.thegoodcaregroup.com/
The Arc (ԱՄՆ), https://thearc.org/




ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

**Գործնական մոդելի բաղադրիչները**

- ներդրողներ՝ սոցիալական ազդեցություն ունեցող անձինք, որոնք պատրաստ են ներդնելու ֆինանսական միջոցներ՝ առանց ակնկալելու մեծ շահույթ:
- քրաուդֆանդինգ՝ հասարակական ֆինանսավորման հարթակներ, որոնք թույլ են տալիս գրավել փոքր ներդրումներ բազմաթիվ մարդկանցից:

Մասնավորապես՝ Ասիական զարգացման բանկն աջակցում է Հայաստանում սոցիալական բիզնեսների զարգացմանը՝ ֆինանսավորելով ծրագրեր, որոնք նպաստում են սոցիալական խնդիրների լուծմանը և համայնքների բարելավմանը[19]: Սոցիալական բիզնեսների պարագայում

| | |
|---|---|
| Encore.org (ԱՄՆ) | • Նպատակ՝ տարեցների գիտելիքն ու փորձը կիրառել համայնքի շարգացման համար:<br>• Գործունեություն՝ կաբմակերպությունը ստեղծում է ծրագրեր, որտեղ մարդիկ թոշակառու դառնալուց հետո ներգրավվում են որպես մենթորներ, խորհրդատուներ կամ հասարակական նախաձեռնությունների ղեկավարներ:<br>• Արդյունք՝ օգնում է տարեցներին ունենալ ակտիվ դեր, պահպանել սոցիալական կապերը և հոգեբանական կայունությունը: |
| The Eden Alternative (ԱՄՆ և Եվրոպա) | • Նպատակ՝ փոխել ծերանոցների ավանդական մոդելը:<br>• Գործունեություն՝ ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ տարեցները ոչ թե կմեկուսանան, այլ կպահեն կենդանիներ, կինամեն պարտեզներ, կվարեն ակտիվ ստեղծագործական կյանք:<br>• Արդյունք՝ նվազեցնում է ընկճախտը և բարելավում կյանքի որակը: |
| Helpage International-ի սոցիալական ձեռնարկները (Հնդկաստան, Աֆրիկա) | • Նպատակ՝ տարեցների ֆինանսական կայունություն ապահովում:<br>• Գործունեություն՝ գյուղական համայնքներում ստեղծել փոքր բիզնես (օր.՝ խյուսվածքագործություն, ձեռքի աքխատանք), որը կղեկավարեն և շահույթից կօգտվեն տարեցները:<br>• Արդյունք՝ նվազում է ծերությամբ պայմանավորված աղքատության խնդիրը, մարդիկ շարունակում են օգտակար լինել և եկամուտ ստանալ: |
| Mirthy (Մեծ Բրիտանիա) | • Նպատակ՝ ապահովել ակտիվ ուսուցում և համայնքային կապեր:<br>• Գործունեություն՝ աղգանց հարթակ, որտեղ 60+ մարդիկ կարող են մասնակցել դասընթացների, խոսել իրենց նախասիրությունների մասին, կաբմակերպել մինի դասեր և վարժանքներ:<br>• Արդյունք՝ օգնում է հաղթահարել միայնությունը և ստեղծում նոր եկամտի աղբյուր: |
| Seniorpreneurs ծրագիր (Կանադա, Ավստրալիա) | • Նպատակ՝ խրախուսել տարեցներին բիզնես սկսել նույնիսկ 60+ տարիքում:<br>• Գործունեություն՝ տրամադրել ուսուցման, ֆինանսական աջակցության և փոքր բիզնես ստեղծելու (օրինակ՝ խոհանոցային, ձեռագործական, խորհրդատվական ծառայություններ) հնարավորություն:<br>• Արդյունք՝ տարեցների ակտիվ ներգրավվածություն տնտեսության մեջ: |
| Papa (ԱՄՆ, Լատինական Ամերիկա) | • Նպատակ՝ պայքար միայնության դեմ:<br>• Գործունեություն՝ ստեղծել հարթակ, որտեղ երիտասարդ "Papa Pals"-երն աջակցեն տարեցներին, ընկերություն անեն, օգնեն առօրյա գործերում: Ծառայություններ առաջարկել ապահովագրական ընկերությունների միջոցով:<br>• Արդյունք՝ սոցիալական կապերի ուժեղացում, տարեցների հոգեկան առողջության բարելավում: |

ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

**Տարեցների համար իրականացվող սոցիալական ձեռնարկատիրության օրինակներ**

[19] Asian Development Bank (ADB). (n.d.). Armenia. https://www.adb.org/where-we-work/armenia

ԱՂՅՈՒՍԱԿ 3

## Սոցիալական բիզնես մոդելներ

| Մոդել | Ինչպե՞ս իրականացնել | Արդյունքը | Հայաստանյան առանձնահատկություն |
|---|---|---|---|
| Տարեցների համար համայնքային ակումբների բացում (Mirthy-ի նման) | Ստեղծել հարթակ, որտեղ տարեցները կարող են փոխանցել իրենց մասնագիտական փորձը (օրինակ՝ խոհարարություն, ասեղնագործություն, պատմություն, երգեցողություն) կամ մասնակցել առցանց դասընթացների: | Կօգնի պահպանել սոցիալական կապերը և ապահովել փոքր եկամուտ: | Գյուղերում սա կարելի է կապել զբոսաշրջության հետ. հյուրերին կարելի է հրավիրել՝ «սովորելու» ավանդական ուտեստների պատրաստում կամ արհեստներ: |
| «Երիտասարդ ընկեր – տարեց» (Papa-ի նման) | Ստեղծել հարթակ կամ ծրագիր, որի միջոցով երիտասարդ կամավորականները կամ ուսանողները կարող են այցելել տարեցներին՝ օգնելու նրանց առօրյա գործերում, ընկերանալու: | Նվազեցնում է միայնությունը, իսկ երիտասարդների համար ստեղծում փորձ և արժեքներ: | Այս ծրագիրը կարելի է կապել համալսարանների հետ՝ որպես ուսանողական փորձառություն կամ սոցիալական ծառայություն: |
| Տարեցների ձեռնարկատիրություն (Seniorpreneurs) | Բացել «Արհեստների տուն» կամ առցանց խանութ, որտեղ կվաճառվեն տարեցների ձեռքի աշխատանքները (գորգեր, ասեղնագործություն, հուշանվերներ): | Տարեցները ստանում են կայուն եկամուտ, պահպանում ազգային ավանդույթները: | Սա կարելի է կապել տուրիզմի հետ՝ «Made by Armenian Seniors» ապրանքանիշի ձևավորմամբ: |
| Առողջության և խնամքի նորարարական ծառայություններ (Eden Alternative-ի նման) | Ստեղծել ծերանոցի նոր մոդել՝ ավելի ջերմ միջավայրով. փոքր պարտեզ, կենդանիների խնամք, ստեղծագործական դասեր: | Տարեցներն իրենց զգում են ոչ թե մեկուսացված, այլ ակտիվ ու պետքական: | Կարելի է օգտագործել գյուղական տները՝ որպես «խնամքի տուրիզմի» վայրեր: |
| Տեխնոլոգիական լուծումներ տարեցների համար | Ստեղծել պարզեցված սմարթֆոնային հավելված, որը տարեցներին կկապի բժիշկների, կամավորների, ընտանիքի անդամների հետ: | Նվազում է միայնությունը, հեշտանում առողջապահական մշտադիտարկումը: | Հայաստանում սա կարելի է կապել հեռավար բժշկության զարգացման հետ: |

շատ կարևոր է Բիզնեսի և սոցիալական ազդեցության սերտիֆիկացումը: Օրինակ B Corp սերտիֆիկացումը ճանաչում է այն ընկերություններին, որոնք իրենց գործունեությամբ գնահատում են ոչ միայն ֆինանսական շահույթը, այլև սոցիալական ու էկոլոգիական ազդեցությունը: Բիզնեսները, որոնք ստանում են B Corp սերտիֆիկացում, պարտավորվում են ապահովել սոցիալական և էկոլոգիական ավելի բարձր չափանիշներ[20]: Աշխարհում տարեցների համար իրականացվում են բազմաթիվ սոցիալական բիզնես նախագծեր (գծապատկեր 7):

Այս մոդելները կարելի է իրականացնել առանձին կամ համատեղ: Հայաստանի շատ համայնքներում տարեցներն աչքի են ընկնում ավանդական գիտելիքի պաշարով ու ձեռքի աշխատանքի հմտությամբ, որոնք կարելի է վերածել սոցիալական բիզնեսի՝ միաժամանակ լուծելով մեկուսացման և ֆինանսական դժվարությունների խնդիրը (գծապատկեր 8):

Կարծում ենք՝ վերոնշյալ մոդելը պարզ է ու կենսունակ, որը կարելի է մեկնարկել նույնիսկ փոքր ներդրումներով (գծապատկեր 9):

Առաջին տարում բիզնեսը գրեթե ինքնածախս կլինի (0%–10% շահույթ), իսկ երկրորդ տարվանից արդեն՝ սկզբնական ծախսերի բացակայության դեպքում, կդառնա շահութաբեր: Ինչպես նաև միջազգային դրամաշնորհային ծրագրերից աջակցություն կարելի է ստանալ նման սոցիալական բիզնեսի համար Հայաստանում: Եթե գտնվի նվիրատու, դրամաշնորհ կամ համայնքային աջակցություն, ապա ֆինանսական բեռը կթեթևանա և բիզնեսն ավելի արագ կերպով կդառնա եկամտաբեր (աղյուսակ 4):

Կարծում ենք՝ Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության համար արդյունավետ են հիմնականում երեք տարբեր ռազմավարություններ, որոնցից առաջ-

[20] B Corporation Certification, https://bcorporation.net/

**Խնդրի նկարագրություն**
- Հայաստանում բազմաթիվ տարեցներ ունեն ավանդական արհեստների մասին գիտելիք (գործագործություն, ասեղնագործություն, կար ուձև, փայտագործություն), բայց հաճախ ապրում են սոցիալական մեկուսացման կամ ֆինանսական դժվարությունների պայմաններում: Նրանց հմտությունները կարող են վերածվել եկամտի աղբյուրի և պահպանել հայկական մշակույթը

**Բիզնես գաղափար**
- Ստեղծել «Արհեստների տուն» սոցիալական ձեռնարկ.
- Տարեցները զբաղվում են ձեռքի աշխատանքով:
- Ապրանքները վաճառվում են.
  - ◊ տեղում (արհեստների տանը, տուրիստական վայրերում),
  - ◊ առցանց (Shopify, Etsy, Facebook Marketplace),
  - ◊ գործընկեր խանութների միջոցով:
- Մասամբ շահույթը տրամադրվում է արտադրող տարեցներին, մասամբ՝ ներդրվում ծրագրի ընդլայնման մեջ:

**Հիմնական քայլեր**
1. **Տարեցների ներգրավում՝** հավաքագրել համայնքներից հմտություն ունեցող տարեցներին:
2. **Տարածքի կամ կենտրոնի ստեղծում՝** փոքր սրահ կամ արհեստանոց:
3. **Ուսուցում և արդիականացում՝** տալ նոր նյութեր, ժամանակակից դիզայնի հմտություններ:
4. **Բրենդավորում՝** «Made by Armenian Seniors» ապրանքանիշ:
5. **Վաճառքի ալիքներ՝** առցանց խանութ, տուրիստական խանութներ, ցուցահանդեսներ:
6. **Գովազդ և համագործակցություն՝** կապեր հյուրանոցների, տուրոպերատորների հետ:

**Եկամտային հոսքեր**
- Ապրանքների վաճառք (հուշանվերներ, գործեր, ծածկոցներ, պայուսակներ):
- Վարպետաց դասեր զբոսաշրջիկների համար (տարեցը սովորեցնում է ասեղնագործել, պատրաստել տոնական հուշանվեր):
- Հատուկ պատվերներ (կորպորատիվ նվերներ, ազգային ոճով աքսեսուարներ):

**Արդյունք տարեցների համար՝** կայուն եկամուտ, ինքնադրսևորման հնարավորություն, միայնության նվազեցում:
**Համայնքի համար՝** մշակութային ավանդույթների պահպանում:
**Սոցիալական ազդեցություն՝** երիտասարդ ու տարեց սերունդների կապի ամրապնդում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 8

**«Արհեստների տուն» – սոցիալական ձեռնարկատիրություն տարեցների համար, մինի բիզնես մոդել (քայլեր+ եկամտային հոսքեր + ազդեցություն)**

### ՍԿԶԲՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ

- Տարածք (փոքր սրահի վարձակալություն, օրինակ՝ 40-60 քմ) – ~ **1,200,000 դրամ / տարեկան**
- Կահավորանք (սեղաններ, դարակներ, կարի մեքենա, ցուցափեղկեր) – ~ **1,000,000 դրամ**
- Հումք (թելեր, կտորներ, փայտ, գործիքներ) – ~ **700,000 դրամ**
- Բրենդավորում և մարկետինգ (պատկերանշան, փաթեթավորում, կայք) – ~ **800,000 դրամ**
- **Ընդամենը սկզբնական ներդրում → ~ 3,700,0 00 դրամ (~9,000 ԱՄՆ դոլար)**

### ՀՆԱՐԱՎՈՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

- Եթե ամսական վաճառվի միջինում 200,000 դրամի ապրանք (տուրիստական սեզոնին ավելի շատ), ապա տարեկան ստացվում է՝
- Ապրանքների վաճառք – ~ **2,400,000 դրամ**
- Վարպետաց դասեր զբոսաշրջիկների համար (միջինում 10 հոգի × 5,000 դրամ × ամսական 8 դաս) – ~ **4,800,000 դրամ / տարեկան**
- Պատվերներ և օնլայն վաճառք (միջին հաշվարկով) – ~ **3,000,000 դրամ / տարեկան**
- **Ընդամենը եկամուտներ → ~ 10,200,000 դրամ**

### ԱՄՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

- Տարածքի վարձ – ~ **100,000 դրամ**
- Կոմունալներ – ~ **40,000 դրամ**
- Մարքեթինգ (սոցիալական ցանցեր, առցանց խանութի ծախսեր) – ~ **80,000 դրամ**
- Աշխատավարձ (համակարգող/վաճառող, կես դրույք) – ~ **200,000 դրամ**
- Հումքի պարբերական գնումներ – ~ **150,000 դրամ**
- **Ընդամենը ամսական → ~ 570,000 դրամ (~1,400 USD)**
- **Տարեկան → ~ 6,840,000 դրամ (~16,500 USD)**

### Հաշվեկշիռ

- **Ընդհանուր ծախսեր (սկզբնական ներդրում + տարեկան ծախսեր) → ~10,540,000 դրամ**
- **եկամուտներ → ~10,200,000 դրամ**

ԳԾԱՊԱՏԿԵՐ 9

**Սոցիալական ձեռնարկատիրության ֆինանսական մոդելը**

ԱՂՅՈՒՍԱԿ 4

**Դրամաշնորհային ծրագրեր Հայաստանում**

| | |
|---|---|
| ***Միջազգային ՄՄԿ և բարեգործական ձևաչափ*** | |
| AGBU (Ավետիք Գալստյան բարերարական միություն) | Թողարկում է մեկանգամյա դրամաշնորհներ, որոնք նախատեսված են տեղի նախաձեռնությունների զարգացման, տեխնոլոգիաների, վերանորոգման և կառուցման համար: Նախագծերը կարող են լինել համայնքային, մշակութային կամ սոցիալական բնույթի: |
| H. Hovnanian Family Foundation (Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամ) | Հիմնադրամ, որը ֆինանսավորում է այնպիսի նախաձեռնություններ, որոնք նպաստում են Հայաստանի և հայ համայնքի զարգացմանը: |
| ***Միջազգային կազմակերպությունների և ծրագրերի աջակցություն*** | |
| IOM (ՄԱԿ-ի Միջազգային օգնության բյուրո) | Առաջարկում է փոքր բիզնեսների համար դրամաշնորհներ՝ մինչև 5 մլն ՀՀ դրամ: Ֆինանսավորում է գործիքների, նյութերի, աշխատավարձերի և զարգացման այլ ծախսեր՝ ըստ ներկայացված բիզնես ծրագրի: |
| ***ՀՀ-ում իրականացվող զարգացման աջակցության ծրագրեր*** | |
| Japanese GGP (Grant Assistance for Grassroots Human Security Projects) | Այս ծրագիրը միտված է աջակցելու համայնքային հումանիտար և սոցիալական նախագծերին: Վերջիններս ներառում են սոցիալական ենթակառուցվածքների ստեղծում, սպասարկման կենտրոնների կառուցում և այլն, որոնք կարող են վերագրվել նաև տարեցների սոցիալական աջակցության ոլորտին: |
| World Bank-ի ենթակառուցվածքային աջակցության ծրագրեր | Օրինակ՝ Armenia—Promoting Social Inclusion and Self-Reliant Livelihood Activities in Armenia, որը ենթադրում է փոքր դրամաշնորհների տրամադրում բիզնես ծրագրերի համար: |
| ***Սփյուռքի և տարբեր այլ ծրագրեր*** | |
| Galvanizing Diaspora Grants Program (Armenia 2041 Foundation) | Այս ծրագրի նպատակն է աջակցել սփյուռքի նորարարական և համայնքային արժեք ստեղծող գաղափարներին: Նախընտրելի են համարվում սոցիալական, մշակութային և տեխնոլոգիական նախագծերը: |

նային են հայկական սփյուռքի աջակցությունը, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (CSR) ծրագրերը՝ մեծ բիզնեսի կողմից աջակցությամբ, ինչպես նաև դրամաշնորհների և ձեռնարկատիրության վարկերի համատեղ փաթեթները[21]:

Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրության զարգացման ուղղությամբ տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվում են մի շարք նախաձեռնություններ, որոնք ամփոփված են աղյուսակ 5-ում:

Աշխարհը դեռ չի պատրաստվել արագ ծերացող հասարակություններին, և այս խնդրի լուծման մեջ սոցիալական բիզնեսն արդեն ունի իր ուրույն տեղը համաշխարհային տնտեսության մեջ՝ նպաստելով սոցիալական բարեկեցությանը, էկոլոգիական անվտանգության ապահովմանը, տնտեսական կայունության մակարդակի բարձրացմանը, ծերացող բնակչության ֆինանսական ուժի աճին, ստեղծելով նոր շուկաներ և սոցիալական փոխանակման հարթակներ: Միջազգային փորձը միտում է ձևավորվել, ըստ որի՝ թոշակի անցած անձինք սոցիալական բիզնեսի միջոցով վերաճում են արդյունավետ աշխատուժի կարևոր տարրի: Վերջիններիս փորձն ու հմտությունները վերածվում են սոցիալական և տնտեսական արժեքի: Համաձայն ՏՀԶԿ, ILO և ԵՄ տվյալների՝ սոցիալական ձեռնարկները միավորում են սոցիալական առաքելությունն ու տնտեսական կայունությունը, հնարավորություն են տալիս թոշակի անցած անձանց վերադառնալու աշխատաշուկա՝ օգտագործելով իրենց փորձն ու հմտությունները: Դրանք հանդես են գալիս որպես տարեցների խնդիրների լուծման բանալի, որի կիրառումը կարող է նպաստել տարեցների խնդիրների լուծմանը նաև Հայաստանում: Այս մոդելը խթանում է միջսերնդային համագործակցությունը և համայնքային զարգացումը:

Սոցիալական բիզնեսներն ապագա ու-

[20] B Corporation Certification, https://bcorporation.net/

[21] Malkhasyan A., EU4Youth project,Social Entrepreneurship in Armenia and Georgia,The Overview of the Social Economy of Armenia: Social Enterprises of Shirak, Tavush and Lori marzes, https://euneighbourseast.eu/wp-content/uploads/2021/07/market-assessment-social-enterprises-am-may-2020.pdf

ԱՂՅՈՒՍԱԿ 5

**Հայաստանում սոցիալական բիզնեսի զարգացմանն ուղղված տեղական և միջազգային ծրագրեր**

| Ծրագրի անվանումը | Նպատակը | Դրամաշնորհի չափը | Հնարավորություն՝ «Արհեստների տան» համար | Հղում |
|---|---|---|---|---|
| EU4Youth – Youth Engagement and Empowerment | Այս ծրագիրը նպատակ ունի աջակցելու երիտասարդական կազմակերպություններին, խթանելու երիտասարդների մասնակցությունը հասարակական կյանքին, ձեռներեցությունը և զբաղվածությունը: Դա ընդգրկում է նաև տարեցների՝ որպես համայնքային զարգացման ակտիվ դերակատարների ներգրավումը: | Մասնակից կազմակերպություններին տրամադրվում են փոքր դրամաշնորհներ՝ մինչև 50,000 եվրո: | Տարեցների ձեռագործ արտադրանքի արտադրությունն ու վաճառքը կարող են համարվել որպես սոցիալական ձեռներեցության խթանման նախագիծ, որը համապատասխանում է ծրագրի նպատակներին: | https://euneighbourseast.eu/projects/eu-project-page/?id=1990 |
| Swiss Cooperation Office – Small Project Proposals 2024 | Շվեյցարիայի համագործակցության գրասենյակը Հայաստանում ֆինանսավորում է փոքր գործողությունների նախագծեր՝ ուղղված երիտասարդների և կանանց իրավունքների խթանմանը, սոցիալական ներառմանը և համայնքային կապերի ամրապնդմանը: | Մասնակից կազմակերպություններին տրամադրվում է մինչև 50,000 շվեյցարական ֆրանկ (մոտ 45,000 եվրո): | «Արհեստների տան» համար: Տարեցների ձեռագործ արտադրանքի արտադրությունն ու վաճառքը կարող են համարվել որպես սոցիալական ձեռներեցության խթանման նախագիծ, որը համապատասխանում է ծրագրի նպատակներին: | https://www.eda.admin.ch/countries/armenia/en/home/news/news/2024/september/call-for-small-project-proposals-2024 |
| Civilitas Foundation – Rural Economic Facilitation Program | Civilitas հիմնադրամն իրականացնում է գյուղական տնտեսական զարգացման ծրագրեր՝ ուղղված գյուղացիների ինքնաբավության և արժանապատիվ կյանքի ապահովմանը: Ծրագրի հիմնական նախաձեռնություններից է կաթնամթերքի արտադրությանն աջակցությունը: | Մասնակից կազմակերպություններին տրամադրվում է միկրոֆինանսավորում՝ 0% տոկոսադրույքով՝ կաթնամթերքի արտադրության համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման նպատակով: | «Արհեստների տան» համար: Տարեցների համար նախատեսված ձեռագործ արտադրանքի արտադրությունն ու վաճառքը կարող են համարվել որպես գյուղական տնտեսական զարգացման նախագիծ, որը համապատասխանում է ծրագրի նպատակներին: | https://civilitas-foundation.org/category/who-we-are-2 |

նեն և կարող են դառնալ Հայաստանի զարգացման կարևոր բաղադրիչներից մեկը՝ տալով ավելի լավ և կայուն կյանքի հնարավորություն հատկապես խոցելի խմբերին: Նման բիզնես մոդելները, որոնք, լայն առումով, ներառում են սոցիալական ձեռներեցություն, միջսերնդային մենթորություն, թվային կրթություն և վերապատրաստում, կարող են «վերակենդանացնել» թոշակառուներին: Հետևաբար՝ կառավարություններն ու միջազգային կազմակերպությունները պետք է շարունակեն աջակցել սոցիալական ձեռնարկատիրությանը՝ թոշակի անցած աշխատուժի գործունեությունը դարձնելով ավելի արդյունավետ և հասանելի:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Մելքոնյան Ն., Սոցիալական ձեռնարկատիրություն: Մարտահրավերներ և հեռանկարներ, 08.07.2023, https://armenia.socialimpactaward.net/article
2. «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների ռազմավարության գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, https://www.e-draft.am/projects/8167
3. Սոցիալական ձեռնակատիրության զարգացման հայեցակարգ, https://www.e-draft.am/projects/1180/about#_Toc505349616
4. Asian Development Bank (ADB). (n.d.). Armenia. https://www.adb.org/where-we-work/armenia
5. B Lab. (n.d.). B Corporation certification. https://bcorporation.net/
6. Bain & Company. (2023). Better with

age: The rising importance of older workers. Bain& Company Insights. https://www.bain.com/insights/better-with-age-the-rising-importance-of-older-workers

7. Cambridge Judge Business School. (n.d.). Mirthy's mission against loneliness. University of Cambridge. https://www.jbs.cam.ac.uk/ventures/mirthy
8. Canada West Foundation. (2017). Engaging "seniorpreneurs" can help spur the economy. https://cwf.ca/research/publications/engaging-seniorpreneurs-can-help-spur-the-economy
9. Civilitas Foundation. (n.d.). Rural economic facilitation program. https://civilitasfoundation.org/category/who-we-are-2/
10. Deloitte. (2018). Global human capital trends: The rise of the social enterprise. Modern Diplomacy. https://moderndiplomacy.eu/2018/04/05/global-human-capital-trends-report-the-rise-of-the-social-enterprise
11. Empleyado. (2022). The economic and social impact of an aging workforce: Why reskilling is the solution. https://www.empleyado.com/articles/the-economic-social-impact-of-an-aging-workforce-why-reskilling-is-the-solution
12. Encore Network. (2025). Transforming the encore stage of life. https://encorenetwork.org
13. Fierce Healthcare. (2023). Papa to more closely align with insurers, promising cost reductions. https://www.fiercehealthcare.com/payers/papa-more-closely-align-insurers-promising-cost-reductions
14. Foundation Center. (n.d.). About us. https://www.fdncenter.org/
15. GIIN – Global Impact Investing Network. (n.d.). About GIIN. https://thegiin.org/
16. Guzmán, C., Santos, F. J., & Barroso, A. (2023). Social enterprises as drivers of social innovation: Evidence from aging societies. International Entrepreneurship and Management Journal. Springer. https://link.springer.com/article/10.1007/s11365-023-00942-6
17. HelpAge International. (n.d.). Promoting the rights of older people. https://www.helpage.org
18. International Labour Organization (ILO). (2023). Intergenerational programs and the future of work. Geneva: ILO. https://www.ilo.org/global/publications
19. James, R., Schwedel, A., Haslett, M., & Bitler, N. (2023). Better with age: The rising importance of older workers. Bain & Company. https://www.bain.com/insights/better-with-age-the-rising-importance-of-older-workers
20. Malkhasyan, A. (2020). Social entrepreneurship in Armenia and Georgia: The overview of the social economy of Armenia. EU4Youth Project. https://euneighbourseast.eu/wp-content/uploads/2021/07/market-assessment-social-enterprises-am-may-2020.pdf
21. Measuring a company's entire social and environmental impact. (n.d.). B Corporation. https://www.bcorporation.net/en-us/certification/
22. Mercer. (n.d.). Reimagining work and retirement: Future of work insights. https://www.mercer.com/insights/people-strategy/future-of-work/reimaging-work-and-retirement
23. Mirthy. (n.d.). Community and activities platform for over-60s. EU-Startups. https://www.eu-startups.com/directory/mirthy
24. Organisation for Economic Co-operation and Development (OECD). (2025). OECD employment outlook 2025. https://www.oecd.org/en/publications/oecd-employment-outlook-2025_194a947b-en
25. Papa. (n.d.). Companion care for older adults & families. https://www.papa.com
26. Petrescu, I. (2015). Social entrepreneurship – Innovative solutions' provider to the challenges of an ageing population: The case of Romanian retirees. ResearchGate. https://www.researchgate.net/publication/286916564
27. Senior entrepreneurship in Australia: Active ageing and extending working lives. (n.d.). ResearchGate. https://www.researchgate.net/publication/324925628
28. Social Enterprise UK. (n.d.). Building a fairer economy through social enterprise. https://www.socialenterprise.org.uk/
29. Swiss Cooperation Office. (2024). Small project proposals 2024. Swiss Agency for Development and Cooperation. https://www.eda.admin.ch/countries/armenia/en/home/news/news/2024/september/call-for-small-project-proposals-2024
30. The Body Shop. (n.d.). Social impact initiatives. https://www.thebodyshop.com
31. The Eden Alternative®. (n.d.). Who we are. https://www.edenalt.org/who-we-are
32. United Nations Development Programme (UNDP) Armenia. (n.d.). About UNDP Armenia. https://www.undp.org/armenia
33. Wilkens, U., & Inceoglu, I. (2020). Later Life Workplace Index: Conceptualization and development of an instrument for measuring age-friendly workplace practices. Journal of Aging & Social Policy. https://en.wikipedia.org/wiki/Later_Life_Workplace_Index
34. World Economic Forum. (2018). Older workers' employment in OECD economies. https://www.weforum.org/agenda/2018/08/older-workers-employment-oecd-economies
35. Yunus, M. (2007). Creating a world without poverty: Social business and the future of capitalism. PublicAffairs. https://archive.org/details/creatingworldwit0000yunu_l2a3

**Тереза ШАГРИМАНЯН**
*Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ*

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА

## СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ СТАРЕНИЯ НАСЕЛЕНИЯ И ВОЗМОЖНОСТИ СОЦИАЛЬНОГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА

Старение рабочей силы является вызовом для экономики, и социальное предпринимательство может стать решением некоторых проблем: создать новые возможности для пожилых людей, обеспечивать их активное участие на рынке труда и способствовать укреплению связей внутри сообществ. Вследствие демографических изменений во многих странах мира использование потенциала вышедших на пенсию работников вновь становится важным направлением экономической и социальной политики. Формируется глобальная тенденция, согласно которой пенсионеры через социальное предпринимательство снова вовлекаются на рынок труда. Такой подход одновременно решает две задачи: обеспечивается социальная интеграция пожилых людей и смягчаются последствия дефицита рабочей силы.

Социальное предпринимательство считается эффективным инструментом, так как объединяет социальную миссию и экономическую устойчивость. Оно создает возможности, благодаря которым накопленный опыт и знания превращаются в новую ценность для рынка труда, общества в целом и молодых поколений. Благодаря этой новой глобальной тенденции люди, оказавшиеся вне рынка труда, становятся движущей силой изменений и одновременно помогают смягчить возникший дефицит специалистов.

Эта тенденция выражается в различных инициативах — от осуществления программ «второй карьеры», продвигаемой Encore.org в США, до цифровой платформы Mirthy в Великобритании и программ Seniorpreneurs в Канаде и Австралии.

**Ключевые слова:** *социальное предпринимательство, старение населения, тенденции рынка труда, «вторая карьера», активное старение, межпоколенческое сотрудничество*

**Tereza SHAHRIMANYAN**
*Administrator of the «Amberd» Research Center, ASUE*

SOCIAL POLICY

## SOCIO-ECONOMIC CHALLENGES OF POPULATION AGING AND OPPORTUNITIES FOR SOCIAL ENTREPRENEURSHIP

The aging of the workforce poses significant challenges for the economy, while social entrepreneurship can become a solution. It creates new opportunities for the elderly, ensures their active participation, and strengthens community ties. As a result of demographic changes, in many countries the potential of the retired workforce is once again becoming an important direction of economic and social policy. A global trend is emerging in which retired workers are re-engaged in the labor market through social entrepreneurship. This approach simultaneously addresses two issues: it ensures the social inclusion of the elderly and mitigates the consequences of labor shortages.

Social entrepreneurship is considered an effective tool because it combines social mission with economic sustainability. It creates opportunities through which accumulated experience and knowledge are transformed into new value for the labor market, communities, and younger generations. Thanks to this new global trend, individuals excluded from the labor market become drivers of change, while also helping to alleviate emerging professional shortages.

This trend is reflected in various initiatives—from “second careers” promoted by Encore.org in the United States, to Mirthy’s digital platform in the United Kingdom, and Seniorpreneurs programs in Canada and Australia.

**Keywords:** *social entrepreneurship, population aging, labor market trends, second career, active aging, intergenerational cooperation*